ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«12» ապրիլի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԲԵՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

Տալ համաձայնություն Հայաստանի նկարիչների միության անդամ, քանդակագործ Բենիկ Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թումանյան 9 հասցեում գտնվող շենքի մուտքին տեղադրելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Լ. Իգիթյան**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԲԵՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում անվանի քանդակագործ Բենիկ Պետրոսյանի /1939-1996թթ./վաստակը հայկական քանդակագործության զարգացման գործում: Բ. Պետրոսյանը անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երևանում /1981թ., 1995թ., հետմահու՝ 1997-99թթ., 2001թ./, Մոսկվայում՝ 2002թ., Լատվիայում՝ 1984թ., ճապոնիայում՝ 1972թ., ինչպես նաև Ֆրանսիայում, Սիրիայում, ԱՄՆ-ում, Հարավսլավիայում, Հոլանդիայում, Լեհաստանում:

Նրա ստեղծագործությունները պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում, նախկին ՍՍՀՄ և արտասահմանյան երկրների պատկերասրահներում և անհատական հավաքածուներում:

Ինչպես նաև հաշվի է առնվում ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի /28.08.09թ./ միջնորդությունը Բ. Պետրոսյանի հիշատակը հավերժացնելու համար:

Հարցը քննարկվել է կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2010թ. ապրիլի 1-ի նիստում և քվեարկության արդյունքում անցել միաձայն:

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Լ. Իզիթյան**